

place, Lagrange, Régnault, և այլն, ընդծովեաներովը, որոնք շոգիի քիմիկոնական շարժիչներով և ատամնաւոր վերածիչներով կը գործեն, արդէն ստեղծած էր այնպիսի նաւեր՝ որոնք գերմանականներէն աւելի հաստատուն են և երազնութաց:

Այս վերջին պատերազմիս երկու տարիներուն ընթացքին մէջ՝ Creusotի մետաղագործատանց նշանաւոր վարիչները Պր. Schneiderներն՝ Laubeuf ճարտարագետի աշխատակցութեամբ, իրենց Շալոն-Քիտր-Սաօնի, Ժիտուի, և Պորտոյի նաւարաններէն ծով ձգեցին սքանչելի ընդծովեաներու նմոյշներ՝ որոնցմով հասարակաց թշնամիին վրայ՝ ապշեցուցիչ փորձեր կատարեցին, ծովերը մաքրագործելու դիտումով:

Շնայտէր հաստատութիւնը՝ իրեն շինած ընդծովեաներու փորձատութեանց համար՝ Թուլոնի նաւակայքին մէջ ստեղծած է Creux saint-Georgesի նաւակայքը, ուր ընդծովեաներու սուզուելուն և վերելակելուն խզճամիտ փորձեր կ'ըլլուին. և հոն կը կազմակերպուին նաւաստիներ և ատակ սպախակոյտներ՝ որոնք նորահնար նաւատորմիդին ղեկավարները և շատ մը փափուկ խնդիրներուն հնարագէտները կ'ըլլան:

Ձրանսական ընծովեաներու նկատմամբ տեղի ունեցած յառաջադիմութիւնը՝ ծածուկ կը պահուի, քանի որ ահաւոր թըշնամին երբ բան մը գիտնայ՝ իսկոյն զայն կատարելագործելու ատակ է:

Եթէ Գերմանական ընդծովեաներու կարթագին և Պալթիմորայ ելմանուտ գործելը՝ բարոյապէս զարմացուց և սքանչացուց ազգերու ժողովուրդները, իրապէս ղեկ կարելի չէ՝ հռչակել՝ որ ընդծովեայ երթևեկութեան և վաճառականութեան նոր դարը հասած չէ: Ընդծովեաներով փոխադրուած վաճառքներու սակաւութիւնը, բաղդատելով երթևեկելու համար եղած ծախսերու մեծութեան հետ, բնաւ շահաւոր չի կրնար ըլլալ: Եւ Գերմանիան վերոյիշեալ վարելակերպներէն զատ, պիտի չկարենայ փորձել ընդծովեաներով վերա-

հաստատել իւր առաջուան ծաղկեալ և ծաւալեալ ծովային վաճառաշահութիւնը, որով նոյն իսկ Անգլիոյ հետ կը մրձակցէր:

Իրեն այս վաճառականութեան ջախջախութիւնը՝ որքան աւելի երկարատեւ ըլլայ՝ այնքան աւելի օր ըստ օրէ իր ցամաքային զօրութիւնն ալ պիտի տկարանայ, պիտի քայքայուի. ինչ որ ընդհանուր մարդկութեան փափաքը և իղձն է, պատերազմէն վերջը տևական խաղաղութիւն մը գտնելու համար: Հ. Կ.



ԼՈՒՍՆԻ ԼՈՅՍՈՎ



Մեծն Պէդհովէն՝ երեկոյ մը՝ տնակի մը առջևէն անցնելու ժամանակ լսեց իւր հրաշալի Suomenalaի մը արձագանքը:

Պահ մը կանգ առնելով՝ սկանչին հասաւ ձայնը կտոլ մը՝ որ կը հտտայչէր.

— Ո՛հ, եթէ արհեստագէտ մը այս կըստորը հնչեցնէր, ի՞նչ որ ուզէր կը նուիրէի...:

Պէդհովէն տնակին դուռը հրեց և ինքզինքը պարզուկ սենեկի մը մէջ գտաւ՝ որուն կից էր կօշկակարի մը խանութը: Գաշնակին դիմաց աղջիկ մը նստած էր ու լուսնի պայծառ լոյսովը կը նուազէր: Իրեն ըով կանգնած էր արհեստաւորի հագուստով երեսասարդ մը:

— Դերեցէ՛ք ինձի, ըսաւ Պէդհովէն՝ քիչ մը տագնապած. — Լսեցի՛, երաժըշտութիւն կար հոս, և... որովհետեւ նուագէ քիչ մը կը հասկնամ, չկրցայ ինքզինքս զուպել ու ներս մտայ...:

Աղջիկը կարմրեցաւ, երիտասարդը յօնքերը զրեթէ սպառնալից պոստկեց:

— Լսեցի՛ նաև ի՛նչ որ կը խօսէիք, շարունակեց Պէդհովէն, դուք կը փափաքէիք... կը ցանկայիք լսել...: վերջապէս, կը ներթը որ ես դաշնակ զարնեմ:

— Շնորհակալ ենք, պարոն, բաւ երիտասարդը՝ աղջկան եղբայրը: — Սակայն դաշնակնիս շատ խեղճ է, և մենք խազի տեստակներ չունինք:

— Խազեր չունինք, աղադակեց Պէդհովէն: — Հապա ինչպէս օրիորդը դաշնակ կը զարնէ:



Պէդհովէն:

Յանկարծ խօսքը կտրեց, երեսը կարմրեցաւ... Անդրադարձաւ որ աղջկէր իրեն դարձուցած էր երկու մարած բիրերը, որոնք արտայայտութենէ զուրկ էին:

— Ո՛հ հազար անգամ ձեզմէ ներս գութիւն կը խնդրեմ... կմկմաց վարպետը: Դիտած չէի... Ըսել է թէ դուք մըտայի՛ կը զարնէք, խեղճ օրիորդ:

— Ա՛յո՛, պարոն, պատասխանեց կոյրը:

— Եւ ո՛ր լսած էք այս կտորը:

— Ճամբուն մէջ, պարոն: Մենք դրացիներ ունինք՝ որոնք դաշնակ կը զարնեն և երբ իրենց պատուհանները բաց ըլլան...:

Կոյրը լռեց: Պէդհովէն գործիքին դիմաց նստելով պիտաւ նուազել: Նորօրինակ ներշնչում մը կ'ոգևորէր գամէնքը, այն խեղճ միջավայրը, աղջկէր և իւր եղբայրը, ուրոնք հրաշացած մտիկ կ'ընէին:

Երբ կտորը վերջացաւ, կօշկակարը՝ նուազածուին մօտեցաւ:

— Ո՛վ էք դուք, Պարոն... ըսէ՛ք ինձ կ'աղաչեմ:

Բայց Պէդհովէն չի պատասխանեց: Հարցմունք ուղղողին դարձուց աչքերը, ժպտեցաւ իւր բնածին քայցր ու միանգամայն մաղձիկ ժպտովը:

— Մտի՛կ ըրէք, ըսաւ իրենց, և ծայրէ ծայր *Suonata*ն հնչեցուց՝ որուն մէկ մասը թշուառ կոյրը ճշմարիտ ոգևորութեամբ սորված էր:

Աւրախութեան աղաղակ մը թաւ աղջկան շրթունքներէն:

— Պէդհովէն, Պէդհովէն...:

Մեծ երաժշտագէտը ոտք ելաւ և հրաժեշտի ողջոյն տուաւ:

— Ո՛հ, դեռ ըլ՛ջ մ'ալ զարկէք... — ինչորեցին միաձայն և պաղատագին՝ երկու երիտասարդները:

Այն պահուն լուսնի արծաթագօծ ճառագայթները թափանցելով ինդնուկ սենեակին մէջ՝ կոյրին մեղոյշ այտերը զգուեցին, որ կարծես սրբուհի մը կը նմանէր:

Պէդհովէնի նայուածքը կօշկակարին աչքերուն հանդիպեցան՝ որ յուզուած մըմընջեց:

— Խեղճ քոյրս:

Եւ *Suonata*ն կրկին հնչեցուց մեծ վարպետը, ի ցնծութիւն դժբաղդ կոյրին:

Պէդհովէն մեկնեցաւ այդ տունէն՝ սրտի կակիծով և արտասուքը աչքերուն մէջ:

Հ. Ն.